«Շնորհակալ եմ Նախախնամութիւնից, որ կարգադրեց այնպէս, որ այսօր Ձեր Բարձրութեան ծննդեան տօնի օրը կարողանում եմ շնորհաւորել Ձեզ այն երկրում, որ բաղդաւորուած է Ձեզմով. թող Աստուած պահպանէ Ձեզ և Ձեր ընտանիքը ընդ երկայն աւուրս ի փառս հայրենեաց և ի մխիթարութիւն սրտի իմոյ»։

Նորին Բարձրութիւնը զգացուած այս խօսքերից յայտնեց, որ ի սրտէ ուրախ է, որ տեսնվում է Նորին Վեհափառութեան հետ հէնց այս երկրում և հաւաստիացրեց Նորին Վեհափառութեան, որ Թագաւոր Կայսեր այցելութիւնը Կովկասի բոլոր ազգութեանց համար կունենայ բարերար ազդեցութիւն և հետեւանք, ըստ որում Թագաւոր Կայսեր սրտին միապէս մօտիկ են Նորա բոլոր հպատակ ազգերն։ Ապա սկսաւ իսկապէս ընտանեկան խօսակցութիւն, որ տեւեց մօտ ½ ժամ։ Նորին Վեհափառութիւնը քաղցր տպաւորութեամբ վերադարձաւ վեհարան։

15ին հոկտեմ. Թագաւոր Կայսեր Կովկասից մեկնելից յետոյ՝ գլխաւոր կառավարչապետ իշխան Դոնդուկով—Կարսակովը վերադարձաւ Թիֆլիզ։

16ին հոկտեմ. առաւօտեան 10 ժամին Նորին Օծութիւնը այցելեց պ. գլխաւոր կառավարիչ իշխան Ալ Միխ. Դոնդուկով—Կարսակովին, որոյ հետ ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան ունեցաւ երկարատեւ խօսակցութիւն Վեհափառին յոյժ զբաղեցնող և նորա հոգացողութեան առարկայ եղող խնդիրների մասին։ Այդ երկարատեւ խօսակցութիւնից յետ՝ Նորին Օծութիւնը մեկնեցաւ մխիթարւած և լի յուսով։ Նոյն օրը ½ ժամից յետ Նորին պայծառափայլութիւնը փոխ այցելութիւն տուեց և մնաց Նորին Օծութեան մօտ մի ժամ։ 19ին հոկտեմբերի Նորին Օծութիւնը յայտնեց, որ զիջանելով Բագուի Հայ հասարակութեան խնդրանաց[1]) ողորմութեամբն Աստուծոյ ճանապարհորդելու է Բագու, իւր հօտին այցելելու համար, որ մինչու ցայժմ ոչ մի ան-

---

[1]) Մակար Կաթուղիկոսը եկաւ Բագու իմ և ժողովրդեան հրաւիրանօքն, և իջեւանեցաւ Դէորգ աղա Լալայեանցի տանը։